

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-0-6-Ա

Քաղ. Երեւան

22.03.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի մարտի 12-ի նիստում քննարկեց արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի (այսուհետ՝ բողոքարկող) կողմից 24.01.2013թ.-ին ներկայացված «WINSTON XS MICRO» (հայտ N20111458) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի հայտը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 90-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք ծառայում են ապրանքի արտադրության տեսակը նշելու համար: Ինչպես նաև նույն կարգի 92-րդ կետի համաձայն՝ նշված նիշերը որպես չպահպանվող տարրեր կարող են ներառվել ապրանքային նշանում, եթե դրանք չեն կազմում նշանի գերիշխող մաս: Սակայն քանի որ հայտատուն չի հրաժարվել նշված ներկայացրել «MICRO» տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից, ապրանքային նշանի գրանցումը մերժվում է, քանի որ տվյալ դեպքում «MICRO» բառն ապրանքի, կոնկրետ դեպքում ծխախոտի ֆիլտրի տեսակ է և ուղղակիորեն նկարագրում է ծխախոտի համար վերջին տարիներին շրջանառության մեջ մտած փոքր ֆիլտրերի օգտագործման նպատակը, որը տարբերվում է մյուս ֆիլտրերից նրանով, որ այն համարվում է էկոլոգիապես մաքուր և կլանում է ծխախոտի վնասակար նյութերը, որոնք բավականի վնասակար են թե ծխողի, և թե շրջապատի համար:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու եւ փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ՝ հաշվի առնելով այն, որ օրենքը չի պարունակում նման նորմ բողոքարկման խորհուրդ համաձայնություն ներկայացնելու միջոցով ապրանքային նշանը գրանցելու վերաբերյալ:

Քննարկման արդյունքում Բողոքարկման խորհուրդը պարզեց, որ բերված համաձայնության հայտարարությունը հիմք չի կարող հանդիսանալ բողոքը բավարարելու համար:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված «WINSTON XS MICRO» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը եւ կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ

Գ. Մելքոնյան